

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև 2013 թվականի հունիսի 25-ի՝ «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև ռազմատեխնիկական համագործակցության զարգացման մասին» Պայմանագրի շրջանակներում մատակարարվող ռազմական նշանակության արտադրանքի առկայության և նպատակային օգտագործման նկատմամբ հսկողության իրականացման կարգի մասին

Հայաստանի Հանրապետությունը և Ռուսաստանի Դաշնությունը, այսուհետև՝ Կողմեր,

2013 թվականի հունիսի 25-ի՝ «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև ռազմատեխնիկական համագործակցության զարգացման մասին» Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում մատակարարվող ռազմական նշանակության արտադրանքի առկայության և նպատակային օգտագործման նկատմամբ հսկողության իրականացման նպատակով և Պայմանագրի 9-րդ հոդվածին համապատասխան,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Պայմանագրի շրջանակներում ռազմական նշանակության արտադրանք մատակարարող Կողմը (այսուհետև՝ մատակարարող Կողմ) իրավունք ունի դրա առկայության և նպատակային օգտագործման նկատմամբ հսկողություն (այսուհետև՝ հսկողություն) իրականացնելու:

Այն Կողմը, որի տարածք մատակարարվում է ռազմական նշանակության արտադրանքը, անհրաժեշտ պայմաններ է տրամադրում մատակարարող Կողմին վերջինիս կողմից հսկողության իրականացման համար:

Հոդված 2

Հսկողության առարկան է հանդիսանում Պայմանագրի շրջանակներում մատակարարված ռազմական նշանակության արտադրանքը:

Հոդված 3

Հսկողության նպատակն է հանդիսանում Պայմանագրի շրջանակներում կնքված կոնտրակտներով մատակարարվող ռազմական նշանակության արտադրանքի առկայության և նպատակային օգտագործման ստուգումը:

Հոդված 4

Սույն Համաձայնագրի իրագործման համար Կողմերի լիազորված մարմիններն են.

Հայկական կողմից՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը,

Ռուսական կողմից՝ ռազմատեխնիկական համագործակցության դաշնային ծառայությունը:

Կողմերի լիազորված կազմակերպություններն են.

Հայկական կողմից՝ պետական կառավարման հանրապետական այն մարմինները, որոնք իրենց կազմում ունեն զորքեր և զինվորական կազմավորումներ, ռազմական նշանակության արտադրանքի հետ կապված գործունեություն իրականացնելու հատուկ թույլտվություն (լիցենզիա) ունեցող կազմակերպությունները, ինչպես նաև այն կազմակերպությունները, որոնք յուրահատուկ ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) նկատմամբ արտաքին առևտրային գործունեություն իրականացնելու իրավունքի վկայականներ ունեն:

Ռուսական կողմից՝ գործադիր իշխանության դաշնային այն մարմինները, որոնք լիազորված են իրականացնելու պետական պաշտպանական պատվերի պետական պատվիրատուի գործառույթ՝ ի շահ Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի, այլ զորքերի, զինվորական կազմավորումների, իրավապահ մարմինների և հատուկ ծառայությունների, և այն կազմակերպությունները, որոնք ռազմական նշանակության արտադրանքի նկատմամբ գործունեության համապատասխան տեսակի իրավունք ունեն:

Հոդված 5

Մատակարարող Կողմի լիազորված մարմնի ներկայացուցիչը և (կամ) լիազորված կազմակերպության ներկայացուցիչը իրավունք ունեն (ունի) ներկա գտնվելու սույն Պայմանագրի շրջանակներում կնքված կոնտրակտներով մատակարարվող ռազմական նշանակության արտադրանքի դուրս գրման, ոչնչացման (օգտահանության) ժամանակ:

Հոդված 6

Մատակարարող Կողմի լիազորված մարմինը հսկողության իրականացման նպատակով նախապես դիվանագիտական ուղիներով հսկողություն իրականացնելու մասին հայտ է ներկայացնում այն Կողմի լիազորված մարմնին, որի տարածք մատակարարվում է ռազմական նշանակության արտադրանքը: Նման հայտում նշվում են այն ռազմական նշանակության արտադրանքը, որի նկատմամբ մատակարարող Կողմը մտադիր է հսկողություն իրականացնել, դրա իրականացման ժամկետները, ինչպես նաև այն տեխնիկական միջոցները, որոնք կօգտագործվեն հսկողության ընթացքում:

Հսկողության նպատակով ձևավորվում է հսկողության խումբ, որը կազմվում է մատակարարող Կողմի արտաքին գործերի նախարարության, պաշտպանության նախարարության, լիազորված մարմնի և լիազորված կազմակերպության ներկայացուցիչներից:

Հսկողության խմբի թվակազմը, որպես կանոն, չպետք է գերազանցի 5 հոգին, եթե այլ բան պայմանավորված չէ Կողմերի լիազորված մարմինների կողմից:

Հոդված 7

Այն Կողմի լիազորված մարմինը, որի տարածք մատակարարվում է ռազմական նշանակության արտադրանքը, իրավունք չունի հրաժարվելու հսկողության խմբին ընդունելուց:

Այն Կողմի լիազորված մարմինը, որի տարածք մատակարարվում է ռազմական նշանակության արտադրանքը, հսկողություն իրականացնելու մասին հայտը ստանալուց հետո հսկողության իրականացման վայրը, ժամկետները և ընթացակարգերը համաձայնեցնում է այդ Կողմի լիազորված կազմակերպության հետ և դիվանագիտական ուղիներով մատակարարող Կողմի լիազորված մարմնին է ուղարկում հսկողության իրականացման հնարավորության հաստատում:

Հոդված 8

Այն Կողմը, որի տարածք մատակարարվում է ռազմական նշանակության արտադրանքը, պարտավոր է ներկայացնել հայտում նշված ռազմական նշանակության արտադրանքը, ինչպես նաև դրա նպատակային օգտագործումը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը:

Հոդված 9

Հսկողությունն իրականացվում է՝ հաշվի առնելով 2002 թվականի նոյեմբերի 5-ի՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև գաղտնի տեղեկատվության փոխադարձաբար պաշտպանության մասին» Համաձայնագրի դրույթները և պահպանելով այն Կողմի օրենսդրությամբ նախատեսված ռեժիմային պահանջները, որի տարածք մատակարարվում է ռազմական նշանակության արտադրանքը, եթե այդ Կողմի միջազգային պարտավորություններով այլ բան սահմանված չէ:

Հսկողության խմբի անդամները հսկողության իրականացման ժամանակահատվածում պարտավոր են պահպանել այն Կողմի օրենսդրությունը, որի տարածք մատակարարվում է ռազմական նշանակության արտադրանքը:

Հոդված 10

Հսկողության իրականացման հետ կապված ծախսերի ֆինանսավորումը կատարվում է մատակարարող Կողմի միջոցների հաշվին: Հսկողության խմբի անդամների կեցության, սննդի, նրանց կողմից տրանսպորտի և միջազգային (միջքաղաքային) կապի միջոցների օգտագործման հետ կապված ծախսերի վճարումը հսկողության իրականացման ընթացքում կատարվում է այն Կողմի ներքին գներով ներկայացրած հաշիվների հիման վրա, որի տարածք մատակարարվում է ռազմական նշանակության արտադրանքը:

Հոդված 11

Այն Կողմը, որի տարածք մատակարարվում է ռազմական նշանակության արտադրանքը, հսկողության իրականացման ժամանակահատվածի համար ներկայացուցիչներ է հատկացնում իր այն լիազորված մարմնից և լիազորված կազմակերպությունից, որոնց միջոցով Պայմանագրի շրջանակներում ձեռք է բերվել ռազմական նշանակության արտադրանք, ապահովում է հսկողության խմբի անդամների դիմավորումը, նրանց ուղեկցումը հսկողության վայր, նրանց աշխատանքի և կեցության պայմանները (ներառյալ սնունդը, բժշկական և տրանսպորտային սպասարկումը, միջազգային (միջքաղաքային) կապի միջոցներից օգտվելու հնարավորությունը անմիջականորեն հսկողության վայրում, ինչպես նաև, հնարավորության դեպքում, հսկողության խմբի ղեկավարների խնդրանքով՝ ցանկացած այլ վայրում), ծառայողական փաստաթղթերի, հսկողության համար բերված տեխնիկական միջոցների պահպանությունը և հսկողության խմբի անդամների անվտանգությունը:

Հոդված 12

Հսկողության իրականացման արդյունքները ձևակերպվում են երկկողմանի ակտով, որտեղ նշվում են.

հսկողության խմբի անհատական կազմը և այն Կողմի ներկայացուցիչների ցանկը, որի տարածք մատակարարվում է ռազմական նշանակության արտադրանքը,

այն փաստաթղթերը, որոնց հիման վրա իրականացվում է հսկողություն (հսկողության իրականացման մասին հայտ, հսկողության իրականացման հնարավորության հաստատում),

հսկողության օբյեկտները,

հսկողության իրականացման ժամկետները,

հսկողության արդյունքները:

Ակտը կազմվում է երկու հավասարազոր օրինակից, ստորագրվում է հսկողության խմբի անդամների և այն Կողմի լիազորված մարմնի ու լիազորված կազմակերպության ներկայացուցիչների կողմից, որի տարածք մատակարարվում է ռազմական նշանակության արտադրանքը:

Ակտի մեկ օրինակը նախատեսվում է մատակարարող Կողմի համար, մյուս օրինակը՝ այն Կողմի համար, որի տարածք մատակարարվում է ռազմական նշանակության արտադրանքը:

Հոդված 13

Մատակարարված ռազմական նշանակության արտադրանքի՝ ոչ նպատակային օգտագործման կամ դրա բացակայության հաստատված և ակտի մեջ գրանցված փաստերը հիմք են հանդիսանում կոնտրակտների համապատասխան դրույթների կիրառման, ինչպես նաև նմանատիպ խախտումների կանխմանն ուղղված միջոցների մշակման վերաբերյալ Կողմերի լիազորված մարմինների կողմից խորհրդակցությունների և բանակցությունների անցկացման համար:

Հոդված 14

Սույն Համաձայնագրում Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձևակերպվում են առանձին արձանագրություններով:

Հողված 15

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին Կողմերի վերջին գրավոր ծանուցումն ստանալու օրվանից:

Սույն Համաձայնագիրը գործում է Պայմանագրի շրջանակներում մատակարարվող ռազմական նշանակության արտադրանքը Կողմերի կողմից օգտագործելու ամբողջ ժամանակահատվածի ընթացքում:

Կատարված է Երևան քաղաքում 2016 թվականի հոկտեմբերի 13 -ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն, ընդ որում՝ երկու տեքստերն էլ հավասարազոր են:

**Հայաստանի Հանրապետության
կողմից՝**

**Ռուսաստանի Դաշնության
կողմից՝**